WIEN 17125 STEMPEL

ԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعهٔ علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Դ. ՊՕԼԱԴ

Գ. ՇՐՋԱՆ | Թիւ 65 | 1899 ՅՈՒԼԻՍ 3

H. Polad, Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,,
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Turquie Constantinople

درعلیه‌ده بغچه قپوسنده اسکی ضبطیه‌ده
۱۹ نومرولی دکانده (حانراقیداك) «مجموعهٔ علوم»
غزته‌سی سرمحرری (بولاد) افندی‌یه

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Յ. Այվազեան.—Մատենախօսական.—Հայ-Բոշաներ։
Գէորգ Կ. Ռ-ՆՃԷԱՆ —Կանանց Լրագիրը։
Դ. Բոլոր.—Գիւղատնտեսական։
Դ. Բոլոր —Արհեստագիտական.—Պողպատ։
Ս. Յ Գէորգեան —Կրթական Հարցում մը։—Երկրաբանութիւն։
Գ. Տ. Մէրոդեան.—Մեղուաբուծական։
Դ. Բոլոր —Շերամաբուծական։
Ա. Յ. Այվազեան.—Խօսք մ'ալ յառաջիկայ ընտրութեան նկատմամբ։
Թղթակցութիւն, Ազգ եւայլն.

Թուրքիոյ համար	տարեկան	50	ղրշ.
» »	վեցամսեայ	26	»
» »	եռամսեայ	13	»
Արտասահման	տարեկան	15	ֆրանք
	կամ	6	ռուբլի

Հատը 40 փարայ

Դրամի տեղ կ'ընդունուի նամակի դրոշմաթուղթ, 50 հատ 1 ղրշ. Նոց դրոշմաթուղթ՝ 50 ղրշ.ի փոխարէն։

Տպագր. Գ. ԳԱՅՄԷՐԵԱՆ
Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատտէսի, թիւ 4

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

—o—

Կը խնդրուի մեր Պատ. գործակալներէն և բաժանորդներէն, որ բարեհաճին ընդ փոյթ ներկայ տարեշրջանի բաժնեգիները յղել խմբագրութեանս, և մանաւանդ անոնք՝ որ տակաւին կը պարտին նախորդ տարեշրջանէն ալ։

ՎԵՆԵՏԻԿ.—Պատ. Խմբագրութիւն Բազմավէպի. — Շնորհակալութեամբ ստացած ենք, խմբագրութեանս հասցէին ղրկուած «Զայնագրեալ Ժամակարգութիւնը»։ Բաժանորդ արձանագրեցէք, և հաճեցէք ընդ փոյթ՝ և առաջին թղթաբերով յղել հետագայ հասցէներուն, Վեր. Հ. Ս. Երամեանի Գործն. Գիտ. բառգրքէն. 1) Գեր. Տ. Եղիշէ Եպիսկ. Դուրեան, վանահայր-վերատեսուչ Արմաչու Զարիսափան Ս. Աստուածածնայ վանուց.—2) Արժ. Հ. Տիրայր վարդապետ Մարգարեան.—3) Արժ. Հ. Աղան վարդապետ.—4) Արժ. Հ. Թորգոմ վարդապետ։

ՎԵՆԵՏԻԿ.—Վեր. Հ. Ս. Երամեան.—Շնորհակալութիւն Ձեր համակրալիր գրութեան. կը պատասխանուի.

ԱՏԱԲԱԶԱՐ.—Ստացած ենք «Բիւզանդիոն»ի խմբագրութենէն երեք քրքմից. Ձեր հաշիւը ճիշտ է։

ԽՕՍՈՒՆԻ.—Ստացած ենք մէկ օտ. ոսկի փոխգիրը։

ՏՐԱՊԻԶՈՆ.—Նշան էֆ. Թահմիզեան.—Վեցամսեայ բաժնեգիները կանխիկ ստացուած է. Ձեր նոր հասցէին կը շարունակուի։

ԱՏԱԲԱԶԱՐ.—Ս. Ց. Գըզըլեան էֆ.—Միւսը յարմարագոյն առթիւ կը հրատարակուի. շարունակութիւնը ընդհուպ յղեցէք։

ԻՍԲԻՋԷ.—Ստեփան էֆ. Ս. Բարթամեան.—Կրկին ղրկեցինք թիւ 64ը։

ԻԶՄԻՏ.—Գործակալ.—Կ'ստանուք, թիւ 49, 50, 51, 52.—Բաժանորդի հասցէն կը փոխուի։

ԱՏԱԲԱԶԱՐ.—Կ. Սէմիզեան էֆ.—Լաւ։

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

,,ԱԴԱՄ''

«ԴԱԼԷՆՏԷՐԵԱՆ ՆՈՐԱԳԾԱՑԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ» անունով այն գործը վերջապէս սկըսաւ հրատարակուիլ, որ կ'ուսուցանէ արանց և մանչ տղոց ամէն տեսակ հագուստներ, ինչպէս նաեւ ՕՍՄԱՆԵԱՆ զինուորական ու քաղաքային համազգեստներ ՁԵՒԵԼՈՒ և ԿԱՐելու եղանակը, բոլորովին նորագոյն և խիստ դիւրըմբռնելի մեթոտով մը։

Գնողներուն դիւրամատչելի ըլլալու համար՝ ընդհանուր գործը բաժնուած է 3 հատորներու։ Ա. հատորը կը պարունակէ բոլոր «Դալեոյով» հագուստները, իրենց ամբողջ մանրամասնութեամբը։ Գործն ընտիր թղթի վրայ, գեղատիպ 200 մեծադիր էջէ և 48 վիմատիպ տախտակներէ կը բաղկանայ, 250է աւելի արտայայտիչ օրինակներով ու պատկերներով։ Իր գերազանց առաւելութիւնն այն է որ՝ ՁԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ եօթ, ինն կամ տասնեւմէկ չափով ձեւել կ'ուսուցանէ ամէն կազմուածքի վրայ։ Ա՛լ աւելի մատչելի ըլլալու նպատակաւ, Ա. հատորին բաժանորդագրութիւնը բացուած է միայն 3 ամսուան համար կէս օսմ. ոսկի՝ կանխիկ, թղթատարի ծախքով 60 դահեկան։

Դիմել Մ. Գալէնտէր. Թարագճըլար փողոց, թիւ 49, Կ. Պոլիս։

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԴԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՑԻ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԲՈՐԻՉԲԱ ՏԱՆ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

Ց. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ Եղբարց Դեղարանը

ԻԶՄԻՏ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակ պիտոյք, դիւրամատչելի գներով։

Ծանօթ. — Մանրադիտակներու տեսակներուն և գիներուն վրայ փափաքողներու, մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Դ. ՐՈՒԼԱՆ

Գ. ՇՐՋԱՆ — ԹԻՒ 65 — 1899 ՅՈՒԼԻՍ 3

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐ

Գ.

Ամէն տեղ տեսած էք գնչուներ։ Բայց երբէք ուսումնասիրած էք այդ ժողովուրդը։ Քննած էք անոնց կեանքը. սերտած էք այդ թափառիկ մարդկանց նիստն ու կացը։ Ուշադրութեամբ կարդացէ՛ք Պ. Վ. Փափազեանցի հետեւեալ մատնագիտական տողերը.

«Ո՛չ մի ցեղ այնքան դիմացկուն, չարքաշ չէ, որքան գնչուն. նա հեշտութեամբ տանում է ցուրտը, որպէս եւ տաքը. ո՛չ մի կլիմա չէ ընկճում նրան. բոկոտն, ցնցոտիներով, գլխաբաց նա թափառում է ամէն եղանակի մէջ իրեն միայն յատուկ ճանապարհներով մի երկրից միւսը, չը վախենալով ոչնչից։ Ամենափոքր հասակից նա վարժւում է թափառականութեան, կապած իր մօր մէջքին կամ քաշ գալով նրա կողքից, ցրտի դէմ պաշտպանուելով միայն չնորհիւ այն ճարպի, որով օծում է նրան իր մայրը ոտից մինչեւ գլուխ։ Ամէն բանի դիմանում է, ամէնին վարժւում է, միայն թէ ազատ լինի եւ անկաշկանդ — ահա գնչուի ամենացանկալի բանը աշխարհիս երեսին։ Նա առանց ազատութեան մի օր չէ կարող ապրել եւ ո՛չ մի հարստութիւն կամ փառք չի փոխել նրա հետ։

Գնչուն կրօն չունի. այս հաստատում են բոլոր հեղինակները եւ եթէ նա Թիւրքիայում թիւրք է կամ հայերի մէջ քրիստոնեայ — դա միայն անում է կամ ստիպուած կամ իր շահու համար։ Իտալացի յայտնի ցիգանագէտ Գուիդօ Կոստա պատմում է, որ ինքը հանդիպել է մի ցիգանի, որ 7 անգամ փոխել է իր կրօնը, նայելով թէ որ երկրումն է եւ ոյժը որ կրօնի կողմն է։ Գնչուն ո՛չ մի գաղափար չունի Աստծոյ, միւս աշխարհի, հոգու անմահութեան եւ այլն վրայ։ Նրա ամբողջ կեանքում ոչինչ չէ կարելի գտնել, որ մատնի որ եւ է կրօնի նշան. նրա երգերի մէջ խակ չկայ հաւատալիքի մասին ոեւէ ակնարկութիւն եւ ինչպէս երեւում է, նրա նախնիքներն էլ եղել են անկրօն եւ անհաւատ։ Իսկ նրանց բոլոր կախարդական եւ այլ նախապաշարումները ենթադրել են տալիս, որ

նրանք ճարպիկութեամբ օգտուել գիտեն անտիրապետ ժողովուրդների կամ ազգերի թուլութիւններից՝ շահուելու համար։

Կրօնի բացակայութեան հետ, չկան նաև իրենց մէջ մի որ և է հասկացողութիւն մի հայրենիքի կամ անցեալ պատմութեան վերաբերութեամբ։ Նա իր աստուածն է համարում այն ամէն ազգի աստուածը, որոնցից աւելի շահ և բարեկամութիւն է ստանում, իսկ իր հայրենիքը՝ այն հողը, որի վրայ նա առժամանակեայ հաստատուում է և կամ ուր դիւրութիւն ունի ապրելու։ Զնայելով դրան, գնչուն հեշտութեամբ կամ բոլորովին չէ ձուլվում մի որ և է ազգի հետ. աղջիկ չէ տալիս, չէ առնում, յարաբերութիւնների մէջ խիստ զգոյշ է և գնչու չեզաղին անուանում է «գահնո» կամ «բուսնո», այլազգիին՝ «պսու», հայերին՝ «կլարաւ» (երկրագործ)։

Ձգուելուելու, միջավայրի ազդեցութիւնից չայլասերուելու պատճառը գլխաւորապէս ներկայանում է նրա թափառականութեան ոգին։ Դեռ ևս Եւրոպայի արևմտեան մասերում — Սպանիայում, Իտալիայում և Անգլիայում, նրանք փոքր ի շատէ հնթարկուել են պայմաններին և կիսովին կորցրել ազգային բնորոշութիւնը, լեզուն, բարքերը։ Նոյնը պատահել է նրանց հետ նաև բնավայրում, ինչպէս ես մատիս եմ ցոյց տալ աշխատութեան ընթացքի մէջ։ Իսկ արևելեան Եւրոպայում և բնավայրի ու Բալկանեան թերակղզու զանազան մասերում նրանք ո՛չ միայն չեն սիրում հաստատական դառնալ և կորցնել իրենց ինքնատիպութիւնը, այլ մինչև իսկ արհամարհաբար, թշնամաբար են վերաբերվում իրենց այն ցեղակիցներին, որոնք մի որ և է տեղ երկար մնում են և ինքնատիպութիւնը սկսում են կորցնել։

Գնչուն — ասում են նրանք — պիտի միշտ թափառի, վրաններով տակ տրի, պատրաստ լինի իսկոյն չուելու։ Եւ իսկական գնչուական լեզուն ու բարքերը կարելի է ուսումնասիրել մի միայն այդ թափառականների մօտ։

Մարդու զարմանքն է շարժում գնչուների տոպոգրաֆիական ընդունակութիւնները։ Զը դիտենալով տեղական լեզուն, երկրի ճանապարհները, աշխարհագրութիւնը, նրանք ամենայն դիւրութեամբ, առանց սխալուելու կտրում են երկիրը ամէն ուղղութեամբ, երբէք չեն մոլորուում, ուղիղ դէպ ի նպատակակէտն են գնում և գիտեն թէ ո՛րտեղից անցնել կարելի է, ո՛րտեղից ոչ. գիտեն թէ ո՛ւր յարմար է վրան կանգնել հանգչելու, ո՛ր գիւղում կամ պանդոկում ընդունելութիւն կը գտնեն և կամ կը վռնտուին։ Աղրէանս Կոլոկչի, Իտալացի յայտնի ցիգանագէտը, Ապլիլենեան լեռներում հանդիպում է մի օր գնչուների մի խմբի, որ այնքան լաւ գիտէին երկիրը և նրա ճանապարհները, որ կարծես բնիկներ լինէին։ Մի ուրիշ անգամ էլ նա Կ. Պոլսի Գադը-քէօյում տեսնում է իտալական գնչուների, որոնք Իզմիրի (Նիկոմիդիա) վրայով Զմիւռնիա էին անցնում այնպիսի դիւրութեամբ, որ կարծես քսան անգամ գնացած եկած լինէին այդ ճանապարհով, չնայելով, որ նրանք առաջին անգամն էին անցնում այդ երկրից։

Ինչո՞ւմն է ուրեմն գաղտնիքը. ինչի՞ց է, որ գնչուները առաջին անգամից իսկ, առանց հարցնելու և առանց մոլորուելու՝ գիտեն իրենց ճանապարհը, գնալիք տեղի ուղղութիւնը, հանգչելու տեղերը, բարեկամ կամ թշնամի գիւղերն ու հանգրուանները։»

Այս ամէն մանրամասնութիւնները՝ երկար հետազօտութեանց և քննութեան առարկայ լինելէ ետու՝ յայտնուած է վերջապէս որ՝ գնչուները ունին իրենց մէջ հետևեալ նշանները.



Առաջինն է, եռաժանին, երկրորդը՝ «սվաստիկա» կոչուածը, երրորդը՝ խաչաձև,

իսկ հոլովումը՝ յայտնի է, որոց մասին ինչ ինչ ծանօթութիւններ տուած եմ առաջին յօդուածիս մէջ։

Այս առթիւ Պ. Փափազեանց՝ իր վերջին երկասիրութեանը մէջ բաւական հետաքրքրաշարժ տեղեկութիւններ ու ծանօթութիւններ կուտայ, որոնցմէ մաս մը կը ներկայացնենք հոս մեր ընթերցողաց հաճոյք մը պատճառելու համար։

«Իտալացի մի ուրիշ ցիգանագէտ, Պրոֆ. Գուիդօ Կորա պատմում էր, որ անդադար, գրեթէ ամէն օր նորանոր նշաններ գծուած էր տեսնում իր տան մօտի ծառերի վրայ և ամէն անցնող ցիգան մտնում էր իր մօտ, որովհետև նա նրանց լաւ ընդունելութիւն էր ցոյց տալիս, ուսումնասիրելու նպատակով։ Աւելի շատ նա տեսնում էր եռաժանին — բարեկամական ընդունելութեան նշանը։

Բացի դրանցից, գնչուները մեծ ընդունակութիւն են ցոյց տալիս լեզուներ շուտով սովորելու մէջ։ Դա էլ շատ է օգնում նրանց թափառականութեան և ճանապարհները դիւրութեամբ գտնելու։

Եւ այդպէս, աշխարհիս մի ծայրից միւս ծայրը կըտրում անցնում են նրանք միշտ թափառելով, միշտ սակաւապետ իրենց թէ ուտելիքի և թէ՛ հագնելիքի մէջ. միշտ դիմացկուն ցրտի, տաքի, յոգնութեան, ամէն տեսակ հանգամանքների և երբէ՛ք գրեթէ չճուլուելով, չկորցնելով իրենց ինքնատիպութիւնը (originalité)։

Գնչուին շատ հաղուագիւտ չէ ցամաք հացով կերակրուիլ ամիսների ընթացքում, մինչև որ յաջողուի մի գիւղից մի հաւ գողանալ։ Շատ սիրում են ուտել ընդեղէն, որպէս տաք կլիմայի զաւակներ, դերադասում են միշտ կծու բաներ — պղպեղ, սոխ, ծխում են և լաւ էլ օղի խմում և հայդանում են ո՛չ միայն տղամարդիկ, այլ և կանայք ու մանուկներ։

Հագուստի կողմից նոյն յատկանիշն ունեն. սիրում են փայլուն բաներ, վառ, կենդանի գոյներ. ամենից աւելի կարմիր և կանաչ կտորներ։ Գրեթէ ոտաբոբիկ և գլխաբաց են մանգալիս. մանուկները եթէ ո՛չ բոլորովին, գոնէ կիսովին մերկ, սև, աղտոտ, չնայելով որ Եւրոպայում ոստիկանութիւնը խստութեամբ հսկում է որ ոչ մի ցիգան մերկ չման գայ։ Հաստատարնակները ապրում են ողորմելի խրճիթների մէջ, աղտոտ, անհոգ։ Խրճիթի մէջ ամենամեծ և պատուաւոր տեղը բռնում է «Օջախը» (Սանթօ), որին նրանք պատուում են և որի վրայ պրպտում են պայտեր չինելով, որովհետև գնչուները ոստիկ ընդունակ են դարբնութեան արհեստին և առ հասարակ մետաղագործութեան։ Բացի այդ արհեստից, զբաղւում են նրանք անասնաբոյժութեամբ և վարպետ են դրա մէջ։ Լաւ երաժիշտներ են, լաւ էլ անասուններ կրթող — արջեր, այծեր։ Արեւելքում նրանք պատմիչներ են, գուշակողներ։»

Իսկ գնչուներու երաժշտութեան մասին ունեցած յարմարութեանցը վրայօք նախընթացիւ գրած եմ։ Գնչուներու եղանակները ունին իրենց բնորոշութիւնը։

Պ. Վրդանէս զմայլանօք կը խօսի, գնչուներուն մելամաղձոտ, երբեմն ճչացող և յանախ ջղեր հալեցնող կրքուտ կտորներ, կայտառ պարերգներ, գողտրիկ մլոդիաներու նկատմամբ, և կը գրէ թէ՝ «Վիսսի բապսոդեաները, մանաւանդ II բապսոդեան, որ կատարելապէս, առանց տպաւորելու, գնչուական եղանակներ են, բովանդակում են իրենց մէջ այդ տարօրինակ ցեղի ամբողջ մուղիկան — տխուրն ու կայտառը, մելամաղձոտն ու զուարթը։»

Եւ վերջապէս, Հայ-Բոշաներու երկասիրողը՝ այնչափ կը խանդավառի գնչուական պարերգներու և երգերուն, որ կը յաւելու թէ՝ «գնչուները՝ յայտնի են պարերի մէջ և դա երեւում է աւելի Թիւրքիայում։ Պարերը ինքնատիպութիւն ունին։ Գնահատուած էին նրանք նոյն իսկ Ֆրանսիայում XVII (18դդ) դարում. յայտնի են Պարսկաստանում (մրթրբբների պարեր), Սպանիայում (corondo պարը), որոնք շատ են յիշեցնում հնդկական և եգիպտական յայտնի «բայադերների» և «հաւազի» պարերը։»

Արդեօ՞ք, ողբացեալ Զուխաճեան Տիգրան էֆէնտիի յօրինած արեւելեան նշանաւոր նուագերգութիւնն՞ր ալ, գնչու մուսաներու ազդեցութեան ներքեւ պատրաստուած երաժշտական հրաշակերտներ են, քանի որ գնչուն՝ երեւելի ծանօթ նուագերգութեանց մէջ, կարեւոր դեր մը կը խաղայ, Տրովադորի մէջ ըլլայ այն կամ թէ՝ Արիֆին հելլեսիի մէջ։

(Շար.) Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԼՐԱԳԻՐԸ

. . . ՏԷՐ,

Օգտաշատ «Հանրագիտակ»ին 59րդ թերթին մէջ, Պոլիս հիմնուելիք ու հրատարակելի կանանց յատուկ լրագրին առթիւ՝ «Ամաթէօռ»՝ լուրջ շրջահայեցութեամբ խորին ակնարկ մը կը նետէ, ըստ կարի իր կարծիքն յայտնելով անկեղծօրէն։ Այս մասին՝ պոլսական թերթերու մէջ տեսնուեցաւ արդէն յօդուածներ, բաղմակողմանի տեսութիւններով՝ որոց արձագանքը արդարև աւելի հեշտիւ և քաղցրալուր կը հասնէր մեզի դաւառներու խորերը, քան ինչ որ աղդեց կամ պիտի աղդէ նոյնինքն մայրաքաղաքի հայ իգական սեռին մէջ։

Կանանց յատուկ լրագրի մը պէտքին առթիւ, շիտակը խօսելով, մեզ համար այսքան ուշ երերալն իսկ՝—դէթ ըստ խոդատապարտելի անտարբերութիւն մ'է։ Ատոր պէտքը շատոնց զգացած ըլլալու էինք, ու շատոնց պէտք էինք ուսումնասիրել այս կարեւոր խնդիրը, քանի որ Հայուհին՝ ցորչափ դաւառացիական փորձառութեամբ կարող եղած եմ լրջօրէն ուսումնասիրել, նոր նոր ձգտում մ'ունի դէպ ի լուսաւորութիւն՝ դէպ ի բարին՝ դէպ ի օգտակարն. և աւելին՝ աւելի նրբացեալ ու քաղաքակիրթ հանդամանք մը կրել իր վրայ, ու կրթեալ մակդիրը սիրաշահիլ, որու զգացման զարթնումը կը պարտինք արդարեւ մեծաւ մասամբ ներկայ դաստիարակութեան։ Մեզ համար կանխակալ կարծիք մը չպիտի համարինք, երբ փութանք յայտնելու թէ, դաւառացի Հայուհին, թէպէտ դեռ անծանօթ լրագրութեան՝ և ինքնամիտ ըսկ արդի դաստիարակութեան մէջ, շօշափելի յառաջդիմութեան մը՝ ու աւելի բարգաւաճ վիճակի մը մէջ պիտի զգայ ինքզինք, իր սեռին յատուկ հրատարակութեան ընթերցումով՝ ուր՝ համերաշխ հրապարակագրութեամբ մը ընթանալու հանգամանքը պիտի ունենան անշուշտ՝ նիւթականը բարոյականին, վերացականը թանձրացեալին հետ խառն։ Թող ներուի մեր համարձակութեանը, երբ ըսենք թէ, մեր Պոլսեցի գրագէտ և ուսեալ հայուհիները, ի բաց առեալ մի քանիներ, որոնք արդէն ծանօթ են իրենց յաճախակի օգտակար գրուածներու հրապարակագրութեամբ, դաստապարտելի կացութեան մը մէջ կը գտնուին իրենց ձեռնպահութեամբ, որք՝ փոխանակ առանձնացած իրենց առանին կամ դպրոցական խուցին մէջ, կրնային իրենց բարոյական ձեռնտուութեամբ մէյմէկ կրթական սատարողներ ու բարերարներ հանդիսանալ իրենց դաւառացի սեռին, խմբագիր վարչութեան մը գլուխ կենալով արժանապէս։

Եւ արդարեւ ինչո՞ւ չխոստովանիլ հոս, թէ դաւառացին ցորչափ ինք իրմով ինքնամիտ, և իրմով բաւականացող գոհացող, այլ ոակայն միշտ հակում մը ունի դէպ ի մայրաքաղաքի ամէն հանդամանաց և առաւել կամ նուազ, ըլլայ արական կամ իգական, հետամուտ է օրինակելու միշտ անոր բարքերը, և ունկնդրել ուշադիր՝ անոր խորհուրդներուն, ըստ որում քաջ համոզուած է, թէ իմացականի ու կրթականի դլխաւոր աղբիւրն՝ և ամենէն արդասաւոր անկարանը մայրաքաղաքն է, ու մայրաքաղաքացին միայն չինիչ օրինակ մը կրնայ ու պարտի հանդիսանալ՝ իր դաւառացի արենակիցներուն. ուրեմն ինչո՞ւ անտարբեր մնալ այս մասին, և ինչո՞ւ տակաւին վայրկեան կորսնցունել։

Ու մենք երբ ներկայիս իբրեւ դաւառացի, ակնդէտ կ'սպասենք այս ձեռնարկի փութով իրականացման, քաջ համոզուած ենք արդէն, թէ այսպիսի կարեւոր հիմնարկութիւն մը՝ կանանց յատուկ թերթի մը հրատարակութիւնը,

մեծապէս նպաստող ու ընձեռող պիտի լինի հայ իգական սեռի իմացական ու կրթական աստիճանի բարձրացման և ազնուացման։ Ինչո՞ւ չփութանք մենք ևս, հրապարակաւ մեր քաջալերն կարդալ այսպիսի կարեւոր թերթի մը հիմնարկութեան համար։ Ցուսալով որ դաւառի մը խորէն եկած քաջալերն ալ, կրնայ իր քաղցր տպաւորութիւնը թողուլ, աղաչելով միանգամայն յարգոյ հրապարակագիրներու, որ դէթ այս մասին, իբր դրական ժամանց «Տօմինոյ»ի նման գրուածներ չնետեն հրապարակի վրայ, ուղղակի կամ անուղղակի, քանի որ խնդիրը այնքան փափուկ է, այնքան օգտակար, նամանաւանդ դաւառացոց համար, և այնքան փափուկ ձեռքերով պիտի կատարուի, զի՝ ամենադոյզն կանխահաս քննադատականներ, կամ վերացական խորհրդածութիւններ, ակամայ մէյմէկ շանթահարիչ խաչդոսներ կրնան ըլլալ հայ իգական սեռին պատիւ բերող ու գործունեայ տարրերէն լրագրական վարչութեան ղեկը ձեռք առնելու տրամադիր եղողներուն։

ԳԵՂԱՄ Կ. ՈՒՆՃԵԱՆ

Ծ. Խ.—Մեր Ցարդոյ յօդուածագիրը շատ եռանդուն կը գրէ. բայց չէ մտածած անշուշտ որ, այսպիսի ձեռնարկի մը համար երեք կարեւոր բաներ պէտք են, «կամք, ոյժ և քաջալեր», կամ ուրիշ կերպ ըսելով, դրամ, գործող և դնող, որոց երեքն ալ համեմատապէս կը պակսին դժբաղդաբար մեր դրական ասպարէզէն։

Զէ՞ մի որ «Հանրագիտակ», այդ կարեւոր պէտքը, այդ ղղալի պակասը վաղուց զգացած ըլլալով, առաջին անգամ, ինք հրապարակ նետեց խնդիրը, գործնական եղանակներով։

Ի՞նչ արդիւնք ունեցաւ. շատեր առարկեցին թէ՝ մեր այդ ձեռնարկ պիտի ծառայէ պարզապէս տնաւէր նորաձեւութիւնը տարածելու՝ նաև գաւառներու մէջ (իբր թէ՝ այսօր, առանց այդ թերթի գոյութեան, նորաձեւութիւնը աւելի իր այլանդակ եղանակներով չի ծաւալիր անոնց մէջ). թէև մեր բուն և անկեղծ նպատակն եղած է՝ ատով ճանչցնել հայ կնոջ, վայելչօրէն հագուելու, զարդարուելու, և կենցաղավարելու միջոցները, և ո՛չ միայն գաւառացի հայուհիին, այլ նոյն իսկ Պոլսոյ մեծամասնութեան, որոնք՝ ֆրանսական թերթերու պատկերներէն օրինակելով՝ առանց հասկնալու, կամ իրենց դերձակուհիին խորհուրդներուն անսալով, ամենէն ծաղրելի ձեւերով կը հագուին, կը կապուին՝ շատ անդամներ շռայլօրէն։

Մեր ձեռնարկը իրագործելու համար, դիմեցինք ժողովուրդի կարծիքին, և խնդրեցինք սկսելու համար՝ մեր ունեցած բաժանորդներէն զատ՝ 300 նոր բաժանորդներ։ Բայց քանի՞ հատ ունեցանք. 200ի չափ թէեւ, բայց մեծ մասամբ մեր միւնոյն բաժանորդներն։ Թերթի մը հրատարակութիւնը՝ մանաւանդ այդպիսի պատկերազարդ թերթի մը՝ մեծ ծախքերու կը կարօտի. երբ ժողովուրդէն սպասուած քաջալերը պակսի, երբ անոր կողմէ անտարբերութեամբ պատասխանուի, գործող մարմինը ի՞նչ կրնայ ընել։

«Հանրագիտակ»՝ եւ կեցած չէ սակայն իր խորհուրդէն, ուշ կամ կանուխ պիտի ձեռնարկէ հրատարակել իր խոստացած «կանանց բաժինը»։ Եւ այս հրատարակութիւնը այնչափ շուտ պիտի ըլլայ, որչափ ժողովուրդի շահագրգռուող դասակարգը քաջալերել փութայ։

Մենք՝ երբ 300 նոր բաժանորդ կը խնդրէինք, անոնց բաժնեգինը կանխիկ դանձելով էր որ պիտի կրնայինք ձեռնարկել. բայց քանի որ հիմա այդ բաժնին արձանագրուողներու մեծագոյն մասը կը կպամեն մեր արդէն ունեցած բաժանորդները, ի՞նչպէս կարելի է ձեռնարկել այդպիսի անբաւական պայմաններու տակ։

ԳԻՒՂԱՑՆՏԵՍԱԿԱՆ

ՎՆԱՍԱԿԱՐ ԹՌՉՈՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ

Ամէն ոք գիտէ թէ, ագռաւները և անծեղները (սագաբղան) ինչ շահատակութիւններ կը գործեն ցանուած արտերուն մէջ։ Ոմանք իրենց արտերուն մէջ խրտուիլակներ կը շինեն, որ թէև մէկ քանի օրեր իր ազդեցութիւնը կ'ունենայ, բայց տակաւ այդ չարտճմի թռչունները վարժուելով, կը հասկընան անոր շինծու ըլլալը, և առանց կարեւորութիւն տալու այդ խրտուիլակներու ներկայութեան, կը շարունակեն իրենց ապատակութիւնները։

Եւրոպայի մէջ այլ և այլ միջոցներ կը գործածեն անոնցմէ ազատելու համար իրենց ցանքերը, որոց գլխաւորները մեր ընթերցողաց տեղեկացնելը օգտակար կը նկատենք։

1.—Ագռաւները իրենց ձուածութիւնը կը կատարեն, բայներնին շինելէն անմիջապէս վերջը, որ կը տեւէ 8 օր. և թխսումը կը տեւէ 21 օր։ Յուրա գիշեր մը, ուելի առաւօտեան մօտ՝ երբ ձագերը հագիւ ծնած են, հրացան ի ձեռին, զգուշութեամբ կը դիմեն դէպի հոն՝ ուր ագռաւները բոյն դրած են. հրացանի երկու հարուած կը պարպեն իրարու-ետեւէ, բոյնին ուղղութեամբ. իսկոյն արու և էգ ագռաւները ահարեկած կը թռին։ Եթէ գիշերը խաւարին է, ըսսը ծագած ատեն միայն իրենց բոյնը կը վերադառնան. իսկ եթէ պարզ է, և թէ լուսին կայ, քառորդ ժամէ մը վերջը կը վերադառնան։ Այս միջոցին՝ կրկին հրացանի երկու հարուած կը պարպեն, և վարուժան ու մարի (արու և էգ) կրկին սարսափահար կը փախչին։

Այս գործողութիւնը 2—3 ժամ կրկնելով, բոլոր նոսրածին ձագերը ցուրտէն կը մեռնին, և դեռ չի բացուած հաւկիթներն ալ կը սառին։ Ագռաւները զայս տեսնելով, վերջնականապէս հրաժեշտ կու տան այդ անհիւրասէր վայրին։

2.—Ագռաւները և անծեղները կը թռնաւորեն, արտերուն մէջ՝ հոս հոն՝ նեխած և վրան որձընկոյզ (գարկա պիւքէն) ցանուած մսի կտորներ ցանելով։ Դիբաղդաբար այս դրութիւնը վտանգաւոր է, ոչ միայն ընտանի օգտակար կենդանիները թռնաւորելու վախով (հաւ, շուն և այլն.), այլ նոյն իսկ մարդոյ համար. որովհետեւ՝ շատ մը գիւղացիներ ախորժակով կու տան այս թռչունները, և երբ առանց գիտնալու անոնց թռնաւորուած ըլլալը, ձեռք անցնեն և ուտեն, բնական է որ, իրենք ալ նոյն մահուամբ իրենց կեանքին վերջ պիտի տան։ Ուստի՝ եթէ երբեք ստիպեալ այս միջոցը գործադրել որոշուի, պէտք է պոհապաններ դնել, և ազդարարել շրջակայ ժողովրդեան։

3.—Հետեւեալ միջոցը ամենէն պարզը և դիւրինն է. մանաւանդ՝ հետաքրքրաշարժ և զբօսեցուցիչ միանգամայն։

Պզտիկ ընկոյզի խոշորութեամբ մսի կտորներ կը պատրաստեն. յետոյ՝ դիմացկուն թուղթէ ձագարներ կը շինեն (նպարավաճառներու շինած «հունի»ներուն պէս կոնաձև, որոց մէջ ապրանք կը դնեն). և որպէս զի այդ ձագարները չի քակուին, մէկ երկու տեղէն կը կարեն։ Երբ այսպէս պատրաստուին ձագարները, այն ատեն անոնց մէջի կողմը ոսպով (էօքսէ) կը պատեն, և իւրաքանչիւրին յատակը կը դնեն մսի կտոր մը։ Այս ձագարները կը դնեն արտին այն կողմերը, ուր ագռաւները ընդհանրապէս բազմութեամբ կը ժողովին։ Ագռաւները մսին հոտը առնելնուն պէս, իսկոյն գլուխնին ձագարներուն մէջ կը մխրճեն, բայց ոսպը իրենց գլխու փետուրներուն կառչելով, անկարելի կ'ըլլայ գլուխնին դուրս հանել։ Այլ ևս առանց դժուարութեան կրնաք մօտենալ ագռաւներուն՝ կամ անծեղներուն. և ձեռքով բռնել զանոնք, ողջ ողջ։

Յաջողութիւնը կատարեալ ըլլալու համար, պէտք է կապոյտ կամ հոլի գոյնով թուղթ գործածել։

Բանի որ վնասակար թռչուններու վրայ գրեցինք, երկու խօսք ալ սա մեր քաղքենի ճնճղուկներուն (սէրչէ) վրայ ըսել, ուելորդ չենք համարիր։ Թէև այս թռչունը իրրեւ երկրագործութեան վնասակար ճանչցուած է աշխարհիս ամէն կողմն ալ, իրր ցանքերը ասպատակող, բայց հարկ է գիտնալ թէ, արդեօք գոյն ալ միւներուն պէս ոչնչացնել պէտք է՞։ Այս մասին՝ սա կրնանք միայն ըսել թէ, դրամարտը՝ կամ բանավէճը այնչափ

տարակարծ չպիտի ըլլար, եթէ բուն իսկ այս խնդրէն շահագրգռող, այսինքն՝ քաղաքներու մօտ երկրագործութիւն ընող անձանց կարծիքը առնուէր։

Արդարև, ճնճղուկներու պաշտպան հոնդիսացողները, դրեթէ մի միայն քաղաքացիներն են կրնանք ըսել, քանի որ անոնք մասնաւոր հաճոյք մը կը վայելեն, երբ ճնճղուկները առաւօտուն կանուխ, պատուհաններուն առաջքը, տանիքներուն վրայ, պատերու ծերպերուն մէջ՝ կամ հաս հոն թռչտելով կը ճաւաղեն, և իրենց փոքը կը կշտացնեն՝ փողոցէն անցնող ձիերու աղբերուն մէջ գտրիի հատիկներ, կամ դուռնէն դուրս թափուած սեղանի փշրանքներ որոնելով, և կամ բուրաստաններու մարգերուն վրայ՝ անկարեւոր նկատուած հատիկներ կամ ճճիներ ճաշակելով։

Բայց երբ անգամ մ'ալ երկրագործին հարցնենք, հարկաւ չուզեր որ այդպիսի հաճոյքի մը ծախքերը մի միայն ինք վճարէ, հաճոյք մը՝ որ դրեթէ իրեն չի պատկաներ։ Թերեւս կը հաւատայ անիկա որ, ճնճղուկը մէկ քանի միջատներ կամ ճճիներ ուտէ, բայց աւելի կ'ուզէ հաւատալ որ, իր պտուղներու բերքերը շատ անգամներ կ'ոչնչանան այդ ճնճղուկներու կտուցին տակ. թէ տասնք շատ անգամներ իր ագարակի բակը կ'իջնան երամով, և անտարբեր աներեսութեամբ մը, հաւերուն ու վառեակներուն պարէնը կը լափեն. թէ վերջապէս, հունձքի կամ վարուցանի առեն, աւելի խուռներամ կը թափին արտերուն մէջ, և ամենէն ընտիր հունտերը կը գողնան։ Թռչուններուն այս կերպով կերած հատիկները, թէեւ պարզ ակնարկով շատ աննշան կ'երեւի, բայց եթէ անգամ մը լրջօրէն հաշուի առնենք, պիտի տեսնենք որ շատ կը սխալինք, ինչ որ կը հաստատէ թէ, ինչո՞ւ համար մենք ալ կարեւորութիւն տալով, խնդրոյ նիւթ ըրած ենք։

Այնպէս կը հաշուի թէ, ճնճղուկ մը օրական 8 տրամ հունտ կ'ուտէ, և եթէ գիւղի մը մէջ բնակող ճնճղուկներու թիւը առ նուազն 1000 հաշուենք, կը տեսնուի թէ, օրական 20 քաշի չափ հունտ պիտի ապառեն անոնք, և իրենց ասպատակութիւնը եթէ երեք ամիս ենթադրենք, գումարը կը բարձրանայ 1800 քաշի։ Ասկէ զատ, մրգեղինայ հասունութեան ժամանակ, եթէ անոնց շահատակութիւնները նկատի առնենք, ամենեւին մէջէն չենք կրնար ելլել, որովհետեւ՝ ամէն տեսակ պտուղ անոնց ճաշակին կը յարմարի, և գէշին աղէկին չեն նայիր։

Շար. Ղ. ԲՈՂԱՏ

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ՊՈՂՊԱՏ

Պատմական և ընդհանուր տեսութիւն.—Պատրաստութիւն. — Գործածութիւն.—Իր տեսակները, և ասոնց ուրոյն յատկութիւնները։

Ատարաստարէն Տիար Կարապետ Մէմիզեան անուն երիտասարդը, որ արհեստով երկաթագործ-դարբին է, մէկ քանի անգամներ արդէն իր արհեստին վերաբերեալ օգտակար և կարեւոր հարցումներով թերթս զբաղեցուցած էր, այս անգամ ալ կը փափաքի տպրիլ, պողպատները՝ և մասնաւորապէս պողպատէ զսպանակները (չէլիկ եայ) մեղրու (ջուր տալ) այն եղանակները, զոր կը կիրարկեն ընդհանրապէս եւրոպական դարբնոցներու մէջ։ Գովելով այդ երիտասարդի փափաքները, որ իր տարիքին յատուկ կարգ մը զուարճութիւններու հրաժեշտ տուած, կը ջանայ թուղթը երկաթին հետ հաշտեցնելով, իր արհեստը կատարելագործել, և փոխանակ անոր գերի ըլլալու, թափանցելով իր գաղտնիքներուն, տիրապետել անոր վրայ։ Թէեւ անձնապէս չենք ճանչնար այդ աշխատասէր պարոնը, բայց իր գրութիւններէն և հարցումներէն այնպէս կը հետեւցնենք որ, ինքնաշխատութեան ճշմարիտ ուշակերտ մ'է, որ յարատեւութեամբ լաւ ապագայ մը կը ըլլայ պատրաստել իրեն, ուրիշներու օրինակ հանդիսանալու տակաւին։ Երանի՛ թէ, այսպիսի արհեստաւորներու վրայ միշտ խօսելու և գրելու առիթ ունենայինք։ Բազմաթիւ

հրջանաւարտներ ունինք, որոնք դժբաղդաբար առանց իրենց ստամոքսը պարարել մոռանալու, երկինքով, լուսինով, մութով, խաւարով, կամ վարդով ոսխակով կ'զբաղին, և երբեք կարեւորութիւն չեն տար արհեստներու, զանոնք իբրեւ ստորին զբաղումներ նկատելով։ Այսպիսիներ լաւ կ'ընեն եթէ իրենց աչքերը երկինքէն դէպ ի երկիր խոնարհեցնեն, մէյմէկ շնորհքով արհեստ ընտրեն իրենց, իբրեւ ապրուստի միջոց, իբրև պատուաւոր զբաղում, իբրեւ անկախ կացութիւն, և դպրոցի գրասեղաններուն վրայ իրենց սորված գիտութիւնները, գործածեն իրենց ընտրած արհեստին մէջ յառաջդիմելու համար։ Լաւ է որ աւելի դրական սերունդ մը հասցնենք, արհեստի, երկրագործութեան ու վաճառականութեան սիրահար, քան խենդ ու խելառ վարդն ու շուշանը ճպուռի մը պէս երգելով. իր ժամանակը սպաննող և անօթութենէ բերանը հոտող, անգոյն, անկերպարան և առանց նկարագրի երիտասարդութիւն մը։ Առիթն է ըսել որ, ի՞նչ կ'ընեն մեր դպրոցները. կամ ի՞նչ կը խորհին մեր դպրոցավարները, երբ այսպիսի աննպատակ դաստիարակութիւնով ոնամիտ երիտասարդութիւն մը կը բեռցնեն ժողովուրդի կքած ուսերուն վրայ։ Ունի՞նք հրապարակին վրայ մատնանիշ ընելու արժանի բազմաթիւ արհեստագէտներ, մեքենագէտներ, ճարտարագէտներ, ո՛չ, այնպէս չէ՞։ Տղան՝ պզտիկ հասակէն պէտք է վարժեցնել արհեստները, ձեռնաշխատութիւնները սիրելու, մեր դպրոցները սոսր՝ մի միայն սոսր աշխատելու են. մեզի՝ արհեստաւոր, երկրագործ և վաճառական պէտք է, և ատոնք՝ իրենց գործերը առաջնորդելու, վարելու են գիտութեան ուղղեցոյցով։ Ա՛հ, մեր դպրոցներուն մէջ գիտութիւններ դաս կը տրուին, չե՛նք ուրանար ասի, բայց ի՞նչ տեսակ գիտութիւններ, կը հաւատա՞ք, այնպիսի եղանակներով, որոնք երբէք օգտակար չպիտի ըլլան անոնց, ուսանողին գործնական կեանքին մէջ։ Մի՛շտ վերացական, ամէ՛ն բանի մէջ երեւակայական։

Մեծն Պետրոս՝ Ռուսաց կայսրը, լաւ համոզուած ըլլալով որ երկրի մը զարգացման, էական պայմանն է՝ արհեստներու յառաջդիմութիւնը, իր ծիրանեփառ բարձունքէն խոնարհելով Եւրոպա գնաց, և արհեստաւորներու աղտոտ մթնոլորտին մէջ աշակերտութիւն ըրաւ երկար տարիներ. և ինչ որ սովրեցաւ, տարաւ իր երկիրը, և մեծ մղում տուաւ արհեստներու յառաջացման։ Օսմանեան պետութեան խնամատուն կայսրերը, իրենց ճաշակին համաձայն մէյմէկ արհեստ ուսած և մշակած են. ուրեմն մենք ո՞րչափ անմիտ ըլլալու ենք որ, արհեստը կ'ատենք, և արհեստաւորին ուժ ու պատիւ չենք տար։ Շատ երիտասարդներ Եւրոպա կ'երթան, որոց մեծագոյն մասը մի միայն բժիշկ ըլլալու. և այսօր Պոլսոյ հրապարակը այնչափ լեցուած է անոնցմով, որոցմէ շատեր իրենց ապրուստը ճարելու մեծ ճիգեր կը թափեն։ Ինչո՞ւ անոնցմէ ոմանք մէյմէկ արհեստ սովրելով չի վերադառնային, որ թէ երկրին զարգացման նպաստած կ'ըլլային, և թէ անոնցմէ իւրաքանչիւրը իր ճիւղին մէջ շնորքով դիրք շինած կ'ըլլար։

Հիմա թէև, ուրիշ զարմանալի նորութիւն մ'ունինք. ոմանք՝ արհեստ ընելով, կը հասկնան միայն կօշկակարութիւն, ատաղձագործութիւն և դերձակութիւն. և այս պատճառու մէկ երկու հաստատութիւններու մէջ ալ խեղճ տղաքները կը դատապարտեն ատոնք սովրելու։ Թողունք որ ատոնք երկրորդական արհեստներ կը նկատուին արդէն, բայց խնդիրը հոն է որ, նոյն իսկ այդ արհեստներու վերաբերեալ ի՞նչ տեսակ գիտութիւններ, կամ ուրիշ կերպով ըսելու համար, այդ արհեստներու գիտական տեսութիւններն ալ կը սովրեցնե՞ն տղայոց, որպէս զի՝ օր մը երբ իրենց գլխուն խանութ բանան, նոր նոր գիւտերով զարգացնեն իրենց արհեստը՝ և քսակը հեռեւարար։ Այդ կարգի արհեստաւորներ արդէն այնչափ շատ ունինք, որոց վրայ ալ նոյնօրինակ խեղճ ու կրակ արհեստաւորներ աւելցնելը այնքան մեղադրելի է, որքան մեր դպրոցներու վերացական դաստաւանդութիւնները. ատով ո՛չ թէ հրապարակը ճոխացուցած, արգասաւորած կ'ըլլանք. այլ աւելի կայն ամլութեան կը դատապարտենք։

Ի՞նչ պիտի ընենք բոլոր մեր այս վարժարանները, որոնք մէյմէկ «անօգուտ» պէտքեր դարձած են մեր գլխուն, և մի միայն թերուս խնամատակներ արտադրելու կը ծառայեն.

գոյեցէ՛ք, փլցուցէ՛ք ատոնց ամէնքն ալ, և անոնց տեղ մէյմէկ արհեստանոցներ կանգնեցէք. հաւատացէ՛ք որ, այն ատեն անոնք աւելի օգտակար պիտի ըլլան, և այս կերպով հանրութեան աւելի մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք։ Թէև մեր այս ըսածները տարօրինակ պիտի երևին ընթերցող հասարակութեան, բայց ի՞նչ օգուտ որ իրողութիւնն այս է։

Եւրոպայի շատ գիւղերու, գիւղաքաղաքներու, նոյն իսկ քաղաքներու դպրոցները, մէյմէկ պարզ արհեստանոց-վարժարաններ են, որոց մէջ տղաքները թէ արհեստ կը սորվին, թէ կարդալ գրել, և թէ այդ արհեստներու վերաբերեալ գիտութեանց գործնական ծանօթութիւնները. մանաւանդ որ, տղաքները, իրենց ճակտի քրտինքով, իրենց դատարակութիւնը՝ կը վճարեն, և այս ամէն առաւելութիւններուն հետ ալ, տղան ուղղակի իր ապագային կը դիմէ հաստատաքայլ, որ իրեն համար անծանօթ մը չէ։ Ինչո՞ւ մենք ալ չի կրնանք այսպիսի հաստատութիւններ ունենալ՝ մանաւանդ մեր գաւառներու մէջ։

Բայց անցնինք մեր խնդրոյն, և պատասխանենք Տիար Կարապետի հարցման, որ առիթ տուաւ մեզ, մեր մասը դնելու, Ազգին մէկ շարընթացիկ նեխած վէրքին վրայ, և անոր անհրաժեշտութեան մէկ պատճառը երևան բերելու։

Հարցման ուղղակի պատասխանելէ առաջ, օգտակար կը նկատենք պողպատին ինչ ըլլալը հասկցնել. ուստի սկսինք նախ հարեւանցի ակնարկ մը նետել պատմութեան վրայ։

Պողպատի գիւտը կը վերագրուի Արեւելցիներուն, բայց իր սկզբնաւորութիւնը դարերու ետին անյայտացած է ուրիշ շատ մը կարեւոր գիւտերու պէս։ Քարոնէնի ըսածին նայելով, Եգիպտացիները Քրիստոսէ 16 դար առաջ, նշմարած էին մէկ քանի տեսակ երկաթներու վրայ միւսմի ազդեցութիւնը. և Տրովադայի պատերազմի ատեն, պողպատը՝ և կամ գէթ՝ միւսմով կարծրացած երկաթը՝ կարծուածէն աւելի տարածուած էր, որովհետև՝ մղտապղնձի հետ հաւասարապէս կը գործածուէր, որածայր զէնքեր, և մշակութեան գործիներ շինելու (Հոմեր, ոդիսականք)։ Սակայն շատ երկար ատեններ հազուագիւտ ըլլալով, թանկագին մետաղ մը կը նկատուէր։ Քրիստոսէ երեք դար առաջ տակաւին, Հնդկաստանի Սարթա-Սէնտհավի (Բէնճապի մէջ) իշխանը՝ իրրեւ թանկագին իմն, 20 քաշ պողպատ ընծայ տուած է, Մակեդոնիոյ կայսեր՝ Մեծին Աղէքսանդրի։ Նոյն ատեններն, Հռովմայեցիք պողպատը կը գործածէին, հոնքահանութեան վերաբերեալ գործիներ դարձնելու։ Այդ թուականներուն, հին Գաղիացիք (Կոլ) տակաւին պողպատը՝ և կամ պողպատը մեկնելու արհեստը չէին ճանչնար, որովհետև՝ Հռովմայեցոց դէմ պատերազմած ատեններն, լայնաշեղի սուրեր կը գործածէին, որոնք՝ առաջին հարուածին կը ծռէին, և երբ շտկելու համար, գաղիացիք կը խոնարհէին, իսկոյն Հռովմայեցիք ալ զանոնք կը խողխողէին իրենց տակուն սուրերով։ Հաւանական է որ, հին ատեններու երկաթի նախնական հնոցներու անկատար դրութենէն, և երկաթը պատրաստելու գործողութեանց անկանոնութիւններէն ըստ դիպաց պողպատ, կամ պողպատացած երկաթ կ՚ստանային, և կամ երբեմն կակուղ երկաթ, և նոյն իսկ պարզ երկաթ։

Շար. Ղ. ԲՈՂԱՏ

ԱՐԹԱՊԱՏԵՆ

ՀԱՆՐՕԳՈՒՏ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

«Հանրագիտակ»ի աշխատակից Յարգոյ Տիար Ս. Յ. Գըզլըեան, հետեւեալ հանրօգուտ հարցումը կ՚ուղղէ՝ «Հանրագիտակ»ի ակնիւ ընթերցողաց։

«Ահա՛ դպրոցական նոր տարեշրջանը կը «մօտենայ, փափաքելի է գիտնալ՝ թէ 1) ո՞ր «ազգին կրթական ուղղութիւնը օգտակար «է և յարմար մեր ազգին, ի նկատ առնելով «մեր ցեղական ընդունակութիւնները, խառ«նուածքը, միջավայրը ևն. ևն. 2) ի՞նչ «է այդ կրթական ծրագրին գործադրու-

«թիւնը յանձնեցնող դիւրին ու դրական մի-
«ջոցը։»

Տիար Ս. Ց. Գրիգորեան իր տալիք պա-
տասխանը վերջի պահելով, կը խնդրէ այս
հարցումով շահագրգռող հասարակութենէն,
որ իրենց պատասխանը կարճ, ամփոփ ըլ-
լայ, և թերթիս մէկ սիւնակէն աւելի տեղ
չի բռնէ. այսու ամենայնիւ, եթէ երբէք
դատնուին պատասխաններ, որոնք մէկ սիւնա-
կէն աւելի տեղ բռնեն, բայց ըստ ինքեան դիտո-
ղութիւններ պարունակեն, և խմբագրու-
թիւնս ալ օգտակար դատէ, կը հրատարակ-
ուին։ Խմբագրութիւնս ալ իր մասնաւոր պա-
տասխանը պիտի ունենայ այս կարեւոր
հարցին։

Տիար Ս. Ց. Գրիգորեան, կը փափաքի նա-
եւ երկրաբանութեան վրայ, ժողովրդական
դասեր գրել «Հանրագիտակ»ի մէջ, որու
սիզբնաւորութիւնը կ'ընենք ներկայ թիւէն
սկսեալ, և կը յուսանք որ «Հանրագիտակ»ի
ազնիւ ընթերցողաց կողմէ հետաքրքրու-
թեամբ պիտի կարդացուի։ Հետեւած է անգ-
լիական հեղինակներու մանկավարժական
դրութեան, որով՝ դպրոցական աշակերտներն
ալ պիտի կրնան օգտուիլ մեծապէս։

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ՆԵՐԱԾՈՒՄ

Ա.

Քարի զանազան տեսակներ և անոնց գործա-
ծութիւնը.—Յատերկրեայ քարէ տախ-
տակամածն և անոր ազդեցութիւնը՝
բնակչաց դործոց վիճակին վրայ։
Նկարագիր Մեծին Բրիտանիոյ։

—o—

1.—Մեր սովորական տուներն, ուր մենք
կը բնակինք, զանազան նիւթերէ շինուած
են, և այդ նիւթերէն մին միշտ «քար» կ'ըլ-
լայ։ Պատերը, օջախները, թոնիրները, ծըխ-
նելուզի մասերն՝ և տանիքներուն վրայի ծած-
կոյթը սովորաբար քարէ են, որուն իրա-
քանչիւր տեսակը շէնքին զանազան մասերուն
համար կը գործածուի։ Այսպէս՝ որմերը կըր-
նան շինուիլ կակուղ քարէ, կրաքարէ կամ
ապիւռէ, օջախները՝ սալաքարէ. տանիքները՝
կղմինտրներէ և քարէ տախտակներէ. ծըխ-
նելոյզը՝ մարմարի կտորներէ և կամ թերթա-
քարերէ. մինչդեռ քարի միւս տեսակը՝ որ
հանքածուին կը կոչուի, իբրեւ վառելանիւթ
հնոցներու մէջ կը վառի։ Փողոցներուն մէջ
դեռ ասոնց շատ տեսակները կարելի է տես-
նել։ Մայթերուանը ուրիշ տեսակ է. խճուղի-
ներուանը՝ ուրիշ տեսակ։ Կրսարկներու և հա-
յոցական շէնքերու մէջ անոնց զարդարուն և
բանուած տեսակներն ալ կան, այնպէս որ
տուներու և փողոցներու փայ սակ ակնարկ
մը ձգելով, դիւրաւ կրնանք ըմբռնել և հա-
մոզուիլ՝ թէ «քարի զանազան տեսակներ
կան։»

2.—Երբ քիչ մ'աւելի ուշադիր ըլլանք,
պիտի տեսնենք թէ քարերը՝ որ այսպէս կը
գործածուին, շէնքի մը մասն ըլլալէ առաջ
զանազան գործողութեանց կ'ենթարկուին։
Որմերուանը՝ դրոցներով և մուրճերով կտրուած
են և զարդարուած, ծխնելոյզի մարմարի հա-
տորները՝ կտրուած և յղկուած. քարէ տախ-
տակներն ալ՝ թերթերու վերածուած։ Ոմանք
ասոնցմէ ալ աւելի փոփոխութեանց ենթար-
կուած են։ Օրինակի համար ապիւռները, որ
թէև ի սկզբան կակուղ կաւ էին, սակայն
թրծուելով կարծրացան։ Շաղախը՝ որ որմե-
րու ապիւռները կամ քարերը իրարու կը
միացնէ, կրաքարը հնոցին մէջ այրելով կը
ստացուի։ Տան մէջ և անէն դուրս գոր-
ծածուած երկաթ գործիները, առաջին ան-
գամ մութ կարմիր և թուխ քարեր էին, որ
յետոյ այրուեցան և հալուեցան, որով յառաջ
եկաւ մեր գիտցած սովորական փայլուն մե-
տաղը՝ երկաթը։ Այսպէս էին նաև սղինձը,
կապարը, անագը, արծաթը և ուրիշ մե-
տաղներ՝ որոնցմէ այսքան ընտանեկան կահ
կարասիներ, զոգեմեքենաներ, զէնքեր և ու-
րիշ բազմաթիւ պիտանի գործիներ շինուած
են և կը շինուին։

3.—Սակայն, թէև քարերը շատ մը ձե-
ւերով իրարմէ կը զանազանուին, բայց՝ ի մի-
ւնոյն կէտ կը միանան.—«Անոնց ամէնքն ալ

երկրին ներքեւէն մակերեսը կու գան։» Հետեւաբար, երբ անոնք բրուելով դուրս կը հանուին, սովորաբար «հանքային» նիւթ անունը կու տան անոնց։ Եթէ կարենայինք հետազօտել անոնց իւրաքանչիւրին արտադրուած տեղը, պիտի տեսնենք թէ կակղաքարն ու կրաքարը թերեւս մօտակայ քարահանքերէն արտադրուած են. քարէ տախտակը՝ մօտակայ բլրոյ մը կողէն, մարմարիոնը՝ հեռակայ քարահանքէ մը, բլրէ մը կամ հաւանականաբար Իտալիէն. հանքածուիլը՝ երկրին խորերէն, և կաւեղէն աղիւսներն ալ՝ մերձակայ կաւի խրամներէն բերուած և պատրաստուած են։

4.—Հին և նոր աշխարհներու նախաքնակ վայրերու մէջ, մակերեւութին մեծ մասը, դաշտային ըլլայ կամ բլրային, կանանչ խոտէ ծածկոյթ մ'ունի։ Ցորենադաշտերը, մարգագետինները, անտառներն ու միգաստանները՝ երկրին մակերեսը տարածուելով կը ծածկեն իրենց ներքեւ գտնուածը՝ ինչպէս որ կապերտ մը կը ծածկէ տախտակամածը։ Բայց այս բուսական երփնագեղ ծածկոյթը, դարձեալ՝ իր ներքեւ գտնուող հողին հետ միասին՝ նուրբ մաշկ մ'է միայն բաղդատմամբ երկրագնային զանգուածին, ծաւալին։ Անոնք՝ բոյս և հող, սոսկ արտաքին խաւ մը կը կազմեն, առ առաւելն քանի մը ոտք խորութեամբ, ուր միշտ ո՛ և է տեսակ քար կրնայ գտնուիլ, այնպէս որ, սենեկի մը կապերտը վերցուցած ատեննիս, ինչպէս որ փայտէ մերկ տախտակամածին վրայ կը գտնենք զմեզ, նոյնպէս և երբ ցամաք երկրի ո՛ և է մէկ մասին՝ հողի և բուսականութեան արտաքին խաւը, կեղեւը, մէկդի քերենք, պիտի տեսնենք քարայատակ տախտակամած մը։

5.—Մեր կենաց բոլո՛ր օրերուն մէջ այսպիսի քարէ տախտակամածի մը վրայ կը շրջագայինք։ Այն քարէ տախտակամածը կը տարածուի բովանդակ երկրագնային վրայ, խորանդունդ ծովուն յատակէն մինչև ցամաքին բարձրագոյն գագաթները։ Հակառակ մեր տուներու տախտակամածներուն, այն շատ խորտ ու բորտ է, հոս իբրեւ հարթածաւալ դաշտ մը տարածուելով, այլուր իբրեւ բարձր և ողոցաձեւ լեռ մը ցցուելով։

6.—Դարձեալ, այս ընդարձակ և աշխարհածաւալ տախտակամածը իր նիւթերուն զարմանալի պէտքութեամբ մեր տան փայտէ նեղ և անճաշակ տախտակամածէն անհունս կը տարբերի։ Այն զանազան քարերը՝ որ շէնքերու և փողոցներու մէջ գործածուած են, այս այլազան քարերուն հազիւ թէ մէկ փոքրաթիւ մասը կը կազմեն։ Քարերն այնքա՛ն բազում են և բազմակերպ՝ զոր անկարելի է հաշուել։ Տուն շինող մը շատ գոհ կ'ըլլայ, եթէ կարենայ իր տան տախտակամածը նոյն տեսակ փայտէ շինել։ Սակայն այն մեծազանգ քարէ տախտակամածը՝ որուն վրայ կ'ապրինք, միակերպ չէ։ Զայն բաղկացնող զանազան մասերը մեծաւ մասամբ խառն և անկանոն կերպով կուտակուած են, և բաշխուած ի սիփուռս երկրագնային, որոց եթէ քարտէսը գծել հարկ ըլլայ, քիչ մը արեւելեան կապերտներու կնճռոտ նախատիպին պիտի նմանի։

(Շար.) Ս. Ց. ԳԸԶԸԼԵԱՆ

ՄԵՂՈՒԱԲՈՒԹԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարտիզակէն՝ Տիար Գէորգ Տ. Մեսրոպեան, առաջնորդ ունենալով իրեն, Վեր. Հ. Մ. Բաջունիի «Մեղուաբուծութիւն» անուն գրքոյկը, իր կատարած անձնական փորձերուն վրայ հիմնուելով, այս մասին մէկ քանի կարեւոր յանձնարարութիւններ կ'ընէ՝ մեղուաբուծութիւնով զբաղող երկրագործ ժողովուրդին. գովելի է Տիար Գէորգ Տ. Մեսրոպեանի նպատակը, որով օգտակար հանդիսանալ կ'ուզէ հանրութեան։ Այսպէս ահա՛ երկրի մը մէջ գիտութիւն, արհեստ ալն. կը յառաջադիմեն ու կը զարգանան, և ժողովուրդը անոնց բարերար ազդեցութիւնը կը վայելէ փոխադարձաբար. և այսպէս եղած է՝ և կ'ըլլայ բոլոր յառաջադէմ երկիրներու մէջ։ «Հանրագիտակ»ի էջերը միշտ բաց են այսպիսի հանրօգուտ գրութեանց առջեւ,

և սիրով ու պատուասիրական յայտարարութիւններով կը հիշեցնէ զանոնք։

Ցաւոնի է թէ՝ մեղուաբուծութիւնը օգտակար և խիստ շահաւոր զբաղում մը եղած է Եւրոպայի մէջ, ու երկրագործութեան է՛ն շատ զարգացած և է՛ն շատ ծաւալած արհեստներէն մին։ Սակայն դեռ մեր մէջ այս գործով պարապողներ չկան գրեթէ, ինչ որ գովելի պարագայ մը չէ անշուշտ։ Մեր երկիրը արդէն իր բնական դիրքով, այսինքն մեղրաբեր բոյսերով ու ծաղիկներով, խիստ յարմարութիւն, դիւրութիւն կ՚ընծայէ այս արհեստի ծաւալումին։ Միայն թէ հարկ է ձգել նախնական յոռի դրութիւնը՝ մեղուները խնամելու մասին, և հետեւիլ եւրոպացոց կատարելագործեալ մեթոտներուն, որով միայն կարելի է յաջողութիւն գտնել, և այն ատեն միայն շահաբեր զբաղում մը կը դառնայ։

Այս նկատումներով, մեղուաբուծութեան մասնագէտ մը չեմ թէև, բայց տակէ 3—4 տարի առաջ, մեր ունեցած մէկ քանի փեթակներուն վրայ իբրեւ գրօսանք, քննական փոքրիկ աշխատութիւն մը կատարելու համար, փափաքեցանք եւրոպական մեթոտի մը հետեւիլ։ Ուստի 1895ին, Վենետիկի Մխիթարեան հայրերէն Հ. Մանուէլ Վ. Քաջունիի հրատարակած «Մեղուաբուծութիւն» անուն 235 էջերէ բաղկացեալ գիրքը թղթատեցինք։ Այս գիրքը թէև մեզ բաւական օգնեց, բայց շատ տեղեր ալ մեծ դժուարութիւններու մատնեց։ Երկը թէև ժողովրդին համար գրուած է, սակայն ժողովրդէն տարբեր ոճով ու անհասկնալի բացատրութիւններ ունի իր մէջ. այսու հանդերձ, իր արժանիքը ու օգտակարութիւնը անուրանալի են։

Արդ, գիտնալով որ իր վիճակին մէջ շատ դիւրին՝ այս արհեստին ծաւալումը մեծապէս օգտակար պիտի ըլլայ մեր ժողովուրդին, որոշեցինք՝ 3—4 տարիէ ի վեր մեր քննութեան ու փորձառութեան արդիւնքն եղող քանի մը դիտողութիւնները հանրօգուտ «Հանրագիտակ»ին միջոցաւ ալնիւ ընթերցողներուն՝ և մանաւորապէս մեր գաւառացի ժողովուրդին ուշադրութեան յանձնել։ Ըսենք նաեւ որ այս գրուածներով չենք ուզեր հասկցնել թէ, մեղուաբուծութիւնը տարածելու գլխաւոր թելադրիչ մը պիտի համարինք ինքզինքնիս։ Ո՛չ, մեծ բան մ՚ըրած ըլլալու յաւակնութիւնը չունինք բնաւ։ Աւելի ընդարձակ ու ճիշտ ուսումնասիրութիւն մ՚ընել մասնագէտներուն և գլխաւորապէս «Հանրագիտակ»ի խմբագրութեան մասնագիտութեան կը թողուենք։

Մեր ըսելիքները պիտի բաժնենք վեց մասերու, այսպէս. Ա.—Փեթակները. Բ.—Ներքին կազմուած փեթակի. Գ.—Գաղթականութիւնները. Դ.—Մեղուներու հիւանդութիւնները և թշնամիները. Ե.—Մեղուները խնամելը. Զ.—Ակնարկ մը մեղուաբուծութեան օգտակարութեան մասին։ Այս 6 գլուխներուն մէջ պիտի ջանանք կարելի եղածին չափ համառօտ բայց շինջահայեաց գաղափար մը տալ մեր ընթերցողներուն։

Ա.—ՓԵԹԱԿՆԵՐԸ

Հայր Քաջունի՝ իր ե կասիրութեան մէջ երկարօրէն կը խօսի մեղուներու փեթակներուն վրայ, և մանրամասնարար թուելով կը ծանօթացնէ եւրոպական և այլ տեսակները, ինչպէս՝ էթլ (Oettl) գերմանացիին, Լէնկդրոթ (Langstroth) ամերիկացի քահանային. Ապոթ (Abbott) անգլիացիին, Սարթօր իտալացիին, Հուպէր (F. Huber) զուիցերիացիին, արաբական, նորմանական և այլ և այլ տեսակ փեթակներ։ Սոնց ամէնէն ալ լաւ և դիւրագործածելին կը ներկայացնէ յարդէ փեթակները։ Տեսնելով որ մեզ համար յարդէ փեթակի գործածութիւնը խիստ դժուարին է ինչ ինչ պատճառներով, տեղական գործածուած հասարակ ձեւը ընտրեցինք, ինչ որ շատ ալէկ յարմարեցաւ մեզի, և դիւրութեամբ կատարեցինք հարկ եղած գործողութիւնները։ Ահա յարդէ փեթակներուն անյարմարութեան գլխաւոր պատճառներէն մէկ քանին։ Մայիսի մէջ կամ առաջ, (որովհետեւ այդ օրերուն մէջ է որ փեթակ պէտք կ՚ըլլայ մեր կողմերը), կարելի չէ գտնել յարդի որտեր և նոյն իսկ չոր խոտեր։ Ցարդը ձիերուն և այլ կենդանիներուն ուտեստին համար կը գործածեն։ Եւ այդ տեսակ փեթակներ չինելու վարժութիւն ալ չկայ։ Մեղուներու թշնամիները, ինչպէս մուկը, կա-

նաչ փայտիրը, մեղրածը (méloè) և այլն։ դիւրութիւնով կրնան մտնել յարդով զինուած փեթակներուն մէջ։ Այս պատճառներէն զատ կան ուրիշներ ալ։

Տեղական փեթակը տախտակէ է, զոր չատ դիւրին ըլլալով ամէն մարդ կրնայ շինել։ Զեւը սնտուկի մը նման է, որու երկայնութիւնն է 80–100 սանթիմեթր, իսկ լայնութիւնը 20-25 սանթիմեթր։ Թէև փեթակի համար այլ և այլ տեսակէ տախտակներ կը գործածեն. սակայն ամէնն ալ հաւասարապէս չեն յարմարիր։ Ռէտինգիին տախտակները, ինչպէս մայրին (չամ աղաճը)՝ բոլորովին անյարմար են. որովհետեւ տմառատեն արեւին տաք ճառագայթները դիւրութեամբ ներքնակողմին կ'ազդեն։ Նաեւ մեղուներուն է՛ն ճնշասակար թշնամիներէն մին՝ ցեցի թիթեռները չատ կ'խորժին ռէտինին հոտէն։ Նմանապէս ուրիշ կարգ մը ճնշասակար որդեր միչտ երեւան կ'ելլեն։ Տախտակներու տեսակին մէջ ամենէն նպատակայարմարը կը սեպուի նիւրկէն աղաճը) որ իր դիմացկունութեամբ և ուրիշ առաւերութիւններով կրնայ օգտակար ըլլալ մեղուաբուծութեան։

Մէկ մէթր երկայնութեամբ հասարակ փեթակ մը շինելու համար հարկ է ձեռքի տակ ունենայ 120 սանդիմեթր տախտակ մը, ու 100 սանդիմեդր երկայն 3 տախտակ։ Այս չորս տախտակները երբար քանի մը պզտիկ գամերով (չիվի) իրար միացնենք, կ'ունենանք քառակուսի երկայն սնտուկ մը, երկու կողմերը բաց, որոնք գոցելու համար պէտք է տախտակի 2 կտորներ առնենք և ծակերուն համեմատ կտրելով կափարիչներ շինենք։ Այս կափարիչները մէյմէկ շարժական գամերով տեղաւորելու ենք. և կամ կափարիչին լայնքէն քիչ մը երկայն փայտի կտոր մը գամելու ենք. որպէս զի տախտակը դէպի ներս չկրնայ երթալ։ Տախտակին այն մասը որ 20 սանդիմ երկայն է, ստորին եզերքը բերելով, այդ կողմի կափարիչին վարի մասին վրայ մեղուներուն ելեւմուտի համար եռանկիւնի ձեւով 5-6 հատ փոքր ծակեր բանալու ենք։ Այնուհետեւ փեթակին ծակափիկներն ու ճեղքուածները գոցելու ենք կավու թրիքով, ինչպէս կ'ընեն ընդհանրապէս։ Արդէն մեղուները չեն ուզեր որ իրենց բնակարանին վրայ ծակեր կամ ըլլա մտնելու տեղեր գտնուին։ ուստի անմիջապէս կը գոցեն ականամոմով (փիլատոնի)։ Ուրեմն կը հասկցուի թէ մեղուները ըսյսէն չեն խորժիր, երբ փեթակին ներսը աշխատութեան մէջ են։ Այս շինութենէն վերջ՝ կ'ունենանք պատրաստ փեթակ մը, որուն մէջ կրնանք մեղուներու ընտանիք մը տնիրտիլ։

Շ-ը.

Պարտիզակ Գ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾԱԿԱՆ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ

ԵՒ

ԻՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

(Շար. թիւ 64 էն)

—o—

Շերամաբուծային մանրացուցական հետազօտութեանց վերաբերեալ պիտոյքները մեծ թիւ մը չեն կազմեր։ Յայտնի է որ. առ հասարակ մանրացուցական զննութիւնները՝ և ի մասնաւորի՝ շերամներու վրայ կատարուածները, երբէք «չոր» և անոքող վիճակի մէջ չեն կատարուիր։ Զննուելիք առարկաներն միչտ հեղուկի մէջ կը պատրաստուին. այդ հեղուկը՝ շերամի համար պարզ «ջուրն» է, և քննութեան ենթարկելի առարկան ալ կը դնեն երկու ապակեայ շերտակներու մէջ։

Զննութիւնը երբ տկար խոշորացումներու տակ կատարուի, կարելի է ապակեայ հատ շերտակներ գործածել. բայց երբ խոշորացումը զօրաւոր ըլլայ, այն ատեն անհրաժեշտ է խիստ բարակ շերտակներ գործածել։ Այս վերջի պարագային, զննուելիք առարկան կը տեղաւորեն ապակեայ շերտակի մը վրայ, որու երկայնութիւնը կ'ըլլայ 60 կամ 75 հազարորդամեդր (միլիմեդր), իսկ լայնքը 20էն 28 հազ.մեդր։ հաստութիւնն ալ 1էն 2

հազմեդր։ Այս շերտակը կը կոչուի մասնա-գիտօրէն՝ «փրապանակ» (porte-objet), որու վրայ ատարկան դրուելէն վերջ, բարակ շեր-տակով մը կը ծածկեն, այս վերջինը ընդ-հանրապէս 18-20 հազ.մեդր քառակուսի կողմ կ'ունենայ. իսկ հաստութիւնը՝ մէկ հազ.մեդրին քառորդ կամ 10ներորդ մասը, այսինքն՝ 4 հատ կամ 10 հատ իրարու վրայ դնելով, ամէնուն մէկէն հաստութիւնը հա-ւասար կ'ըլլայ՝ 1 հազ.մեդրի, Այս շերտակ-ներն ալ կը կոչուին «իրափակ»։

Բոլոր այս շերտակները պէտք է կարգաւ զետեղուած ըլլան, իրենց հաստատութեան և երկայնութեան չափերով խորշերու բաժ-նուած տուփերու մէջ։ Զոր օրինակ, 1 հազ. մեդր հաստութիւն ունեցողները զատ խոր-շի մը մէջ, մէկ տասներորդ հազ.մեդր հաս-տութիւն ունեցողներն ալ ուրիշ խորշի ելն։ Բոլոր այս ապակեայ շերտակներէն, և մաս-նաւորապէս իրափակներէն, շերամարոյծ մը պէտք է բաւական մեծ քանակութեամբ ու-նենայ իր տրամադրութեան տակ։

Ապակեայ անօթներ, զոր օրինակ, պարզ ջուրի անոտն դաւաթներ. ապակեայ խողո-վակներ և գաւազանիկներ, յախճապակիէ մէկ կամ երկու սանդ, մէկ քանի զուգորդ-ներ (pinces=չիմթ), փոքրիկ սրածայր մկր-ատներ, ելն, ելն։ Բոլոր այս պիտոյքները գործասեղանին վրայ գտնուելու են աշխա-տութեան ժամանակ, ինչպէս և խիստ մա-քուր մէկ քանի կտոր լաթ, դերձան, պլէ-րոյէ պզտիկ վրձին մը, կատարելապէս մա-քուր, և նախապէս ալքոլի մէջ լուացուած։

Շիշի մը մէջ թորեալ ջուր, կամ եթէ կա-րելի չըլլայ՝ գէթ անձրեւի ջուր (թորելը ա-ւելի նախընտրելի է) ունենալու է միշտ ձեր ձեռքին տակ։ Նոյնպէս՝ սրուակ մը ալքոլ, կրկնաթոր եթէր (éther réctifiés), սովորա-կան անուշադր (ամոնեաք=նիշադրի բուհը) և ջրախառն ջրաբլորական թթուտ (ասիտ քլորիտրիք=թթուղ բուհը)։

Վերջապէս, մանրադիտը ունենալու է ապակեայ գնտաձեւ ծածկոց մը, որու յա-ատակը եզերուած ըլլայ մետաքսէ ծոպերով, որ կը ծառայէ՝ մանրադիտակը չի գործած-ուած ատեն, վրան ծածկելու. և եթէ մանր-բադիտակին տակ ալ մթագոյն թաւիշ մը տարածուած ըլլայ, այն ատեն ամբողջ գոցուող ծածկոյթ մը ունեցած կ'ըլլաք, ուր-կէ ներս փոշիները չեն կարող անցնիլ։ Աւելի աղէկ է միշտ այս կերպով պահել մանրադի-տակը՝ քան թէ՝ ամէն անգամ քակելով իր տուփին մէջ տեղաւորել։ Որովհետեւ՝ մէկ կողմ թողլով սա առաւելութիւնը՝ որ նաև անհիմնական զննութեան մը համար միշտ պատրաստ պիտի ունենաք ձեր մանրադի-տակը, աւելի զայն խնայած պիտի ըլլաք չարունակական ցնցումներէ, որոնք տեղի կու տան ընդհանրապէս՝ այլ և այլ նրբին կտորները խախտելու, վերստիւեալ եղանա-կաւ՝ ձեր մանրադիտակը երկար տարիներ լաւ դիրքի մը մէջ կը պահուի։

Շար. Ղ. ԲՈՂԱՏ

ԽՕՍՔ Մ'ԱԼ

ՑԱՌԱՋԻԿԱՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Յունիս 24ի առաջադրեալ ընտրու-թիւնը դեռ չի կատարուեցաւ, բայց ընտրելեաց ցուցակն հետզհետէ փոխա-նակ ընդարձակուելու, սահմանափակ-ուեցաւ և դատ քան զդամ նիհարցաւ ու նիհարնալու վրայ է՝ Միւնհոդոսական-նաց ոմանց մի զկնի միոյ հրաժարմամբը։

Այս առթիւ զարմանալի չէ՞ որ առա-ջին բոժոժն կախողը եղաւ Մամպոյ Արքեպիսկոպոսը, ուրկէ բնաւ այս ան-գամ չէր սպասուեր, զի Միւնհոդոսական եպիսկոպոսաց մէջ ամենէն երիցագոյնն ինքն է, և որ վերջին ու վերջընթեր երկու Հռովմէական Հայ կաթողիկոսաց ընտրութեան և օրհնութեան մասնակից ու հանդիսապետն եղած է ժամանակին։ Կը յիշեմ որ 1881ին ալ, Տ. Ստեփան-նոս-Պետրոս Ժ. Գազարեանի ընտրութեան ժամանակ՝ ընտրելիութենէ հրաժարե-ցաւ Նազարեան սրբազան, և այն ա-տեն՝ «առ համեստութեան» վերագրուե-ցաւ, մինչդեռ այս անգամ «առ ծերու-թեան» վերագրել կը նկրտին բարեմիտ ոմանք։ Բան իս, անկողմնակալ ընթացք կամ ուղղութիւն մը բռնած կ'ըլլանք, երբ ընտրելիութենէ կամովին հրաժարե-ողներու մասին սակաւատող կենսա-

գրական ծանօթութիւններ տալու ըլլանք մեր հեռաբրբիր ընթերցողաց։

Արհիպատարաւ Նազարեան բնիկ Մերսինցի է. ծնեալ 1830 հոկտ. 8։ Զենք գիտեր երբ քահանայ ձեռնադրուեր է, բայց գիտենք թէ՝ 1863ին եպիսկոպոս ընտրուեր և 1864 մայիս 5ին եպիսկոպոսական օծումը ընդունած է ի Զմմառ՝ Գրիգոր-Պետրոս Ը. կաթողիկոսէն։

Ուսմունքը կատարելագործելու համար՝ ի Բրօքանդա մեծասան տարիներ մնացած է, ուր՝ Փիլիսոփայական և Աստուածաբանութեան ընթացքն աւարտելէ զատ, ուսած է Հայերէն, Իտալերէն, Լատիներէն, Արաբերէն, Տաճկերէն, և քիչ մ՚ալ Ֆրանսերէն։

Իր կեանքը և պաշտօնավարութիւնը՝ միշտ գաւառներու մէջ անցուցած է։ Իբրեւ Օրթոտոքս աւանդապահ մ՚ էլ Տանն Լիբանանու կաթողիկոսութեան իրաւանց և աւանդութեանց։ Ուստի, թ՚նչ կը նշանակէ այս միջոցիս՝ Պոլիս չգալ, և ինքզինքը թէ՝ ընտրողութեան և թէ՝ ընտրելիութեան մէջ չէզոքացնել ու ձեռնպահ գտնուիլ։

Նմանապէս, հրատարակուեցաւ թէ՝ Բերիոյ վիճակաւոր Թուրքեան Սեւեռիս Արքեպիսկոպոս և Տիգրանակերտի Անդրէաս Զէյէպեան եպիսկոպոս ընտրելիութենէ հրաժարած են, բայց ոչ ընտրական մասնակցութենէ։

Թուրքեան և Զէյէպեան Գերապայծառները՝ ընտրելիութենէ հրաժարիլն կանխելու համար՝ թերեւս իրենց վերապահեալ բանաւոր պատճառներ ունենան։ Ամէն ոք՝ ազատ չէ՞, իր գիտցածը և զգացածը ի գործ դնելու։ Մենք ալ ազատ չէ՞նք, իրենց վրայ քանի մը տող ծանօթութիւն հաղորդելու։

Տ. Սեւեռիս Թուրքեան ծնած է՝ 1845 սեպտ. 12ին ի Պէյթեատին (մերձ ի Պէյրութ)։ Զմմառի Մայրավանքը ուսած է Հայերէնը. և այն տեղէն անցած է ի Կալիր՝ Յիսուսեանց կղերանոցը, որ ի Լիբանան գեղեցիկ հովտի մը մէջ հաստատուած է։ Այս վարժարանին մէջ սովրած է Թուրքեան Լատիներէնը և Իտալերէնը։ Գաղղիարէն և Անգլիարէն լեզուները իւրացուցած է։ Իսկ մայրենի լեզուն կը համարուի Արաբերէնը։ Քահանայ ձեռնադրուած է Պէյրութի մէջ՝ 1871 նոյեմբ. 13։ 1890 նոյեմբ. 4ին, Սկարեան կաթողիկոսէն ձեռնադրուած է եպիսկոպոս Գերմանիկոյ։ Թուրքեան՝ ժառանգական խնդրոյ մը ազդաւ, մինչեւ Գանդէսի ափունքը չափած է, և ի վերադարձին՝ յեգիպտոս պաշտօնավարած բաւական տարիներ։

Վերջին տարիներս՝ Բերիոյ Արքեպիսկոպոսութեան փոխադրուեցաւ։ Կը հաւատանք թէ, ինքը ոչ միայն եօթը լեզուներ կը թէքէ, կը գրէ ճարտարօրէն, այլ և «Ֆինանսի» լեզուէն ալ քաջ հասկացող մ՚է, և զանազան պետութեանց արժեթղթերու շահագործող մը՝ յօգուտ ազգատաց և կարօտելոց։

Անդրէաս Զէյէպեան, եպիսկոպոս Տիգրանակերտի։ Ծնած է ի Տիարպէքիր, 1848 սեպտ. 8ին։ Բրօքանտայի աշակերտելով՝ ուսած է Լատիներէն, Իտալերէն, Տաճկերէն, բայց ամենէն աւելի քաջ ուսումնասիրած լեզուն՝ Արաբերէնն է։ Քահանայ ձեռնադրուած է 1872 ապրիլ 21ին ի Մերսին, տեղւոյն Արքեպիսկոպոս Նազարեանէն։ Կաթողիկոսական Տեղապահի պաշտօնը վարած է իր ծննդավայրը։ Այս տարի մայիս 2ին, տիտղոսաւոր Անարզարայի Արքեպիսկոպոսէն ու կաթող. Պատրիարքական Տեղապահ Տ. Սեւեռիս Արիփարեան Սրբազանէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ։ Ֆէրահեանի յաջորդը՝ բընաւ ցոյց ու բոմբիւն չի սիրէր։ Ինքը՝ աւելի խորհուրդի մարդ է, և ազնուապետական հովեր առած տեսն՝ ժողովրդեան ամէն դատակարգէն ալ սիրուած և յարգուած է։

Սոյն երեք եպիսկոպոսներէն զատ, Սերսվբէ եպիսկոպոս Դաւթեանն ալ կը հրաժարեցնեն թէ՝ ընտրողութենէ և թէ՝ ընտրելիութենէ ալ։ Ինչո՞ւ, թ՚նչ պատճառաւ։ Վասն զի անթեմ է եղեր։

Մի՞թէ անթեմ եպիսկոպոսն Դրանկաթողիկոսարանին եպիսկոպոսը չի՞ համարուիր, ըստ եկեղեցական օրինաց, կամ ըստ ընկալեալ սովորութեան։

Եւ միթէ՝ Եգիպտոսի արդի հովուական պաշտօնը կամ Առաջնորդութիւնը՝ «գործնականապէս» ո՞վ կը կատարէ։

Եւ եթէ բացառիկ կաթողիկոսէ մը ձեռնադրուած ըլլալը պիտի պատճառաբանուի, միթէ՝ Դաւթեանի օծակիցը չէ՞ Յովհան Քիւբէլեան՝ տիտղոսաւոր Արքեպիսկոպոսն Ատալիոյ։

Ինչո՞ւ տարբեր չափ, և տարբեր տնօրինութիւն. մանաւանդ՝ միևնոյն եւ կեղեցւոյն ծառայող երկու հաւասարապատիւ և օծակից պաշտօնէից վրայ՝ խտրութիւններ դրուին։

Կը խնդրեմ, որ յատկապէս սոյն կէտը նկատողութեան առնուլ բարեհաճին Սինհադոսական Հարք։

Կը լսենք թէ ուրիշներ ալ պատրաստականութիւն կը յայտնեն եղեր. հրաժարելու, եթէ ընտրուին իսկ, տեղի տալու համար՝ ամենէն աւելի արժանա-

ւորագունին ; և համբէն ազգին չեշտաթին և Անձկալուոյն։

Արդէն ընտրութեան բուն ստորոգելին՝ հանդէպ եկեղեցւոյ և ժողովրդեան վկայութեան, ընտրելոյն արժանիքն է, ուղէ եպիսկոպոս ըլլայ այն, ուղէ վարդապետ։

Հռովմէական Հայոց Պատրիարքարանի առ ձեռն օրէնքն ալ՝ որ ապուած և վաւերացուած է արդէն, նախատեսած է այս իրաւացի պարագան, և «Կաթողիկոսութեան հինգ ընտրելեաց մէջ նաև վարդապետաք կրնան գտնուիլ» տրամադրելի յօդուածով մը՝ արժանաւոր վարդապետաց անուններն ալ ի հարկին ցանկին մէջ դրուելու ապատութիւնը և իրաւունքը՝ չէ ապահովանափակած։

Եւ միթէ՝ Վենետկոյ արդիւնաւոր միաբաններէն՝ Հ. Ղեւոնդ վարդապետ Ալիշանի պէս կղեր մը՝ վարդապետ մնացած ըլլալուն համար, արժանեաց մասին՝ քանի մը տասնեակ կաթողիկոսներ չի՞ կշռեր։

Էր ուրեմն զրկանք ընել այնպիսի տաղանդաւոր պարզ ու անսեթեւեթ եկեղեցականի մը, որ համակ հոգի է, համակ Հայութիւն է, և որ վարդապետ ըլլալուն համար՝ միայն ցանկէն դուրս նետուած կամ նկատուած։

Եւ եթէ՝ ցանկեալները անպատճառ եպիսկոպոս եղած պիտի ըլլային, և ոչ վարդապետ, «ապագայ գումարուելիք Սիւնհոդոսի որոշողութեան ենթարկեալ» առաձգական բացատրութեամբ, հապա ո՞ւր է Լեհաստանի Հայ գաղթականութեան Առաջնորդը՝ Լեմբերկի Արքեպիսկոպոս Սահակ Գերապայծառ Իսհակովիչի անունը։

Այս դարուս մէջտեղը, և քիչ մ՚ալ վերջերը, նոյն իսկ Հայ Հռովմէականաց Պատրիարքութիւնը՝ երկու մասի բաժնուած չէ՞ր։ Կրօնական գործոց վերատեսչութիւնը ստանձնող վերին հեղինակութիւնը՝ «Նախագահ» անունով կ՚որակուէր, ինչպէս էին Նուրիճան Նախագահը, Պօղոս-Մարուշ Արքեպիսկոպոս Նախագահը, ինչպէս երբեմն Հասուն-Անտոն Արքեպիսկոպոս նախագահը։

Իսկ աշխարհական գործոց վերին հսկողութիւնն ստանձնող եկեղեցականը՝ Պատրիարք տիտղոսով կը ճանչցուէր, ինչպէս էին Վենետկոյ Ստեփաննոս Փափազեանը, Նիկողայոս վարդապետ Կակոնեանը, և երբեմն Հասուն Նախագահը՝ որ միանգամայն պատրիարքութեամբ հանդերձ կատարեց այդ պաշտօնը, և ի մի ձուլելով զայն, և յետոյ՝ այս միացեալ Պատրիարքութիւնն ալ՝ Տանն Լիբանանու Կաթողիկոսութեանը հետ կապեց ու շաղկապեց իր անձին վրայ, որուն յաջորդութիւնն է այսօր որ կը շարունակուի, և պիտի ընտրուի նոր Կաթողիկոս-Պատրիարք մը, որ յատկացուած է զարդիս սահմանափակ ցանկի մը մէջէն առնել այդ պաշտօնին յարմար այնպիսի մէկը, որ ոչ թէ՝ ինքը բարձրանայ այդ տիտղոսաւոր պաշտօնովը, այլ իրմով բարձրացնէ այդ Կաթողիկոսական-Պատրիարքական փափուկ պաշտօնը։ Ահա, անցա՛ն, գացի՛ն այն ժամանակները, ու ալ չեն վերադառնար, երբ յիշենք թէ՝ իւրաքանչիւր բարձրաստիճան՝ հոգի կու տար այդ Կաթողիկոսական Աթոռին վրայ բարձրանալու, այդ Պատրիարքական բարձր պաշտօնին տիրանալու համար։

Այժմ ամէն իրաղեկ և խղճի գիտակցութիւն ունեցող հոգեւորական, կ՚զգայ այդ պաշտօնին բարձրութիւնը, և առընթեր փափուկ պատասխանատուութիւն մը կենալը, ուստի կանգ կ՚առնու, ձեռնթափ կ՚ըլլայ հո՛ն, և կը դողայ թեկնածու ըլլալ անոր։

Բայց կը ցաւինք խոստովանելու, թէ՝ տակաւին բարձրաստիճան եկեղեցականներ կը գտնուին եղեր, որ ժողովրդեան մէջ՝ ընտրելիութենէ հրաժարիլ կեղծելով, իրենց բուն և թագուն նպատակն է, աւելի ինքզինքնին անուշցնել և ընտրելի կացուցանել հասարակաց կարծեաց առջեւ։

Կուզէ՞ք արդարը լսել. երկիւղածութեամբ լուարո՛ւք։

«Ո՛վ որ ամենուն համար պիտի ըլլայ, պէտք է ամենուն կողմանէ ընտրուի։» Չի՞ ինչպէս կաթողիկոսը՝ ժողովրդեան համար է, նոյնպէս ժողովուրդն ալ կաթողիկոսին համար է։ Ուստի, կաթողիկոս ընտրուող եկեղեցականը պէտք չէ որ միայն ինքը ուզէ այդ պաշտօնը, այլ կաթողիկոսութիւնն ալ զինքն ուզելու է։

Կը հասկնա՞ք Հարք Պատուականք։

Ա. Ց. ԱՑՎԱԶԵԱՆ



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Ց. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԷՑԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Զինական, Հնդկական և Ճարոնական ամենաընտիր տեսակէ եղող արտադրութիւնները պիտի գտնէք ապահովաբար վերոյիշեալ պատուաւոր վաճառատան մէջ անհամեմատ ժանութեամբ։

Գաւառներու համար, յանձնարարութիւնները փութով և ճշդիւ կը կատարուին։

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, Ճէլալ Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճառատան ապրանքները ժողովուրդէն գընահատուած ըլլալով, շատեր անոնց կեղծը հրապարակ հանած են. ուստի զգուշանալու համար, վերոյիշեալ վաճառանիշին տակ Կ. Եավրուեան և Ց. Իսագուլեան ստորագրութիւնը փնտռեցէք։

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԷՂՕՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐԶԷ
Կ. ՊՈԼԻՍ, ՖՆՏՔԼԷԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ

Սոյն վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամեն տեսակ թարմ դեղօրայք. վիրաբուժական գործիներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը յարմար գներով։ Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար ատեն անձնական փորձառութիւններ ունին։ Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացընելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը ղրկուին դեղօրայք, ամենայն արագութեամբ, թարմ և մաքրելի գներով։

ՄԻԶԱՏԱՊԱՆ ՓՈՇԻ

Զոր մեծաքանակ բերել տուած է վերոյիշեալ վաճառատունը՝ ուղղակի Տալմացիայէն։

Մլուկները, լուերը, և ուրիշ ասոնց նման գլխաւորապէս միջատներ վայրկենապէս շանթահար կ'ընէ։

Թարմ. խիստ ազդեցիկ և գինը ամուր։

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԻ (ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՒ

Դիմեցէք առանց երկմտելու, Գումգապու Զարիֆեան դեղարանը, ուր պիտի ստանաք 5 դահեկանի փոխարէն, փոքրիկ սրսուակի մը մէջ, Ս. Զարիֆեան էֆ·ի հնարած «հակակոշտային» հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ։

Գաւառներէ ուղղներու կը ղրկուի թղթատարով։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ - 29ՐԴ Տարի, կիսամսաթերթ ազգային, Գրական և Քաղաքական։ Խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան։ - Տարեկան կանխիկ 80 ղրշ կամ 17 Ֆրանք, Ուսուցիչներու համար 60 ղրշ կամ 13 Ֆրանք։ Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր։

ԲԱԶՄԱՎԷՊ — 57ՐԴ տարի, ամսաթերթ, Հայ մատենագրական, ստուգաբանական, պատմական, քերականական, աշխարհագրական, հնախօսական, և այլն։ - Տարեկան կանխիկ, 10 Ֆրանք։

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep,, St. Lazare Venise (Italie)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ — 13ՐԴ տարի. ամսաթերթ. Հայ-գրական յօդուածներէն զատ ճշտիւ տեղեկութիւն կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւլն.ի նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վերայ եւլն։ Տարեկան կանխիկ 10 Ֆրանք։

à la Rédaction de la Revue "Hantess,,
VII|2 Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակ կը հրատարակուի առայժմ շաբաթը անգամ մը. իր նպատակն է գիտութիւնները ռամկացնել, եւրոպական արհեստներու, արուեստներու, ճարտարարուեստներու, երկրագործութեան եւն. դրութիւններն ու նորութիւնները ծանօթացնել գործնական բացատրութիւններով։

Հանրագիտակ՝ իր յառաջդիմութիւնը ժողովուրդին յառաջդիմութեան մէջ, իր իսկական շահը՝ հանրութեան մէջ փնտռել՝ իրեն միակ նպատակ ըրած ըլլալուն, հաստատած է հարց-պատասխանի դրութիւն մը, որու օգտակարութիւնը փորձով հաստատած են մեր յարգոյ բաժանորդները։

Հանրագիտակ կը պատասխանէ գլխաւորաբար այն ամէն օգտակար հարցումներու, որոնք կը վերաբերին երկրագործութեան, Անասնաբուժութեան, Արհեստագիտութեան, Ճարտարարուեստի, Առտնին տնտեսութեան և իրենց յարակից ճիւղերուն։

Եթէ տրուելիք պատասխանները թերթիս պարունակութեանց մաս կազմեն, որոցմէ հանրութիւնը և երկիրը կրնայ օգտուիլ, խմբագրութիւնս ոչ է փոխարինութիւն չի պահանջեր։

Ուղղուած հարցումներու մէջէն, ամենէն առաջ կը պատասխանուի անոր, որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն ունի. մնացեալներուն կը պատասխանուի յարմարագոյն առթիւ։

Կը պատասխանուի մի միայն այն հարցումներուն, որոնք կ'ուղղուին Հանրագիտակի Պատ· բաժանորդներու կողմէ։

Տրուած պատասխանները շահեկան և օգտակար կերպով ներկայացնելու համար, ուղղուած հարցումներու կարեւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ կը տրուին, որ կրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ կը պատասխանուի։ Այս պատճառաւ պէտք չէ մենք անմիջական պատասխան խնդրել։

Անոնք որ իրենց գրաղումին վերաբերեալ ոչ է հարցում կ'ուղղեն խմբագրութեանս, և կ'ուղեն պատասխանը միայն իրենց վերապահել, պէտք է մասնաւոր սակարկութեամբ, և հարցումի կարեւորութեան համեմատ վճարում մ'ընեն։

Եթէ պատահի հարցում մը, որ թերթիս ծրագրէն դուրս ըլլայ, և պատասխանը ստանալու համար մասնագէտներու կարծիքին պէտքն ղգացուի, ծախքը՝ և այդ մասնագէտներու պահանջած փոխարինութիւնը պէտք է ընէ՝ հարցատէրը։

Հանրագիտակ կ'ընդունի այն ամէն անձանց աշխատակցութիւնը, որոնք թերթիս ուղղութեան համար այն հանրօգուտ յօդուածներ կ'ուղղեն։

Իր աշխատակիցներուն կը տրուի առայժմ թերթիս մը։ Ինչպէս յառաջդիմութեան հետ ծանօթ է նաեւ դրամական փոխարինութիւն ընել ապագային։

Հանրագիտակ իր բաժանորդներու կողմէ եղած յանձնարարութիւնները կը կատարէ. եթէ փոխարժէքը կանխաւ՝ յանձնարարութեան հետ ղրկուի։

Հանրագիտակ կ'ընդունի ամէն տեսակ ծանուցումներ և ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով։

Հեղինակներ և հրատարակիչներ, որք կ'ուզեն արժանապէս գրադատուիլ կամ գնահատուիլ, պարտին 3 ական օրինակ ղրկել խմբագրութեանս իրենց գործերէն։